ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«02» դեկտեմբերի 2024թ. N 201-Ա

ՀՐԱՄԱՆ

«ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

ՊԱՐԶՎԵՑ

Գործի նախապատմությունը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Շինպլյուս» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Կապալառու) 15.05.2020 թվականին կնքվել է N «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Կապալառուն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ72+000-կմ75+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքները:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական

նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավոր է աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

Պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքի որակի և Պայմանագրով նախատեսված ժամկետի պահպանման համար:

Պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով, որ Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետով Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-1» ծածկագրով Պայմանագիրը:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 703-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ օրենսգրքով, այլ օրենքներով կամ կապալի պայմանագրով, ապա՝

1) նյութերի, սարքավորումների, մշակման (վերամշակման) հանձնված գույքի կամ պայմանագրի կատարման համար օգտագործվող այլ գույքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը կրում է դրանք տրամադրած կողմը.

2) կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը, մինչև պատվիրատուի կողմից այն ընդունելը, կրում է կապալառուն:

Օրենսգրքի 713-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել կապալառուի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ): Մասնակիցն ընդգրկվում է Ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգի N 526-Ն որոշման 33-րդ կետի 6-րդ ենթակետի և Պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի համաձայն՝ Կապալառուն խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Շինպլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Հրամանը տրամադրվում է «Շինպլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Կապալառուին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում ներառելու համար:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Շինպլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

2/2/2024

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. ԵՐԻՑՅԱՆ

ք. Երևան